դին անանկ կերեայ , որ իրենց ծանրութի
մը չի տար : որչափ վազեննէ՝ ծագը մօրը
վը հեծած է , ու երկու ձեռքով շլլիքը ա-

մուրմը բռնած , որ չիմար :

Հասարակ իրենց կերակուրը պտուղէ . ա-
նոր համար պտղոյ ատենը խիստ պարարտ
կըլլան . ու ան ատենը իրենց միսը խիստ
համով կուգայ ամէրիքացւոց : Եւրոպա-
ցի Ճամբորդներէննալ ով որ կերաւնէ , կը-
գովիէ : Պտղէն զատ կուտեն նաև որդ ,
մամուկ , ոջիլ , ու ձուկ , որ իրենց պօչով
ջրոյն մէջէն կըքունէն . չաղանօղ բռնել

բւղեննէ , իրենց պօջը ծովը կըթողուն
ծարը չաղանօզին կըմօտիկցնեն . երբոր
չաղանօզը մատվրներովը կըքռնէ միւ
կարծելով , մէկէնմը վեր կըքաշեն :

Ո՞ւկ զարմանալի քանմընալ ունի առ
կապիկս + իր աղլիքներուն (պաղրսախնե
ըուն) մէջէն շատ որդեր կելլան եր
կան բարակ , 7 , 8 բթամատ՝ ինչվան 12 ,
13 բթամատ՝ երկան . պաղիախին մէջ
ավուճով որդեր ժողվեցին :

Բնութ շատ չուստէ աս կապիկս , յաջող ,
աչքը բաց , հասկրցող , որ մարդը կըզար
մայնէ . նաև մեղմէ ու հեղ (մահճուտ) .
շուտով կընտանենայ , և զինքը կըսիրեցը
նէ , կանչեննէ կըսեն ոմանք կրաքանչան
մը հանելով պին կուտայ . եկողներուն
բարեկուտայ նշանով : Բայց ծաղը (մաս
խարա) ընող բնութի ունի , ու շատ ծի
ծաղական շարժմունքներ . բարկանայնէ
աղբաները մէկ մէկու կըզարնէ : Ը առ
վոր մէկ տեղ կըքալեն , մէկ մէկու բան
կըհասկցնեն , մէկ մէկու կօգնեն . երբոր
իրենց անտառէն մարդ մը անցնինէ , ա-
նանկ շարժմունքներ կընեն ծաղը ընե-
լով , երեսնին ծումուկելով , որ մարդուն
գժուարը կուգայ . ոմանք կըսպառնան
աղբանին ցըցնելով , մէկմէկու զարնելով .
ոմանք ծառին մէկ ձիւղէն մէկալ ձիւղը
կինջ

կինջնան իբր մարդու վր վաղեն տէի .
ոմանք ծառերուն ճիւղերը կը կըտրտեն
կընետեն , ոմանքալ իրենց աւելորդուիր
մարդուն վր կընետեն կըձգեն :

Որսորդները զ անաղան Ճամբայ ունին
բռնելու աս Քօախիդաները , և ուրիշ
Դահրդորիթիդոս կապիկները . յա երկան
պօչ ունեցողները , երբոր ուղեննէ ա-
սմանք բռնել , կելլան ան լեռներուն գլու-
խը , ուր որ իրենց ձագերը պահած են .
Հոն աս դիս ան դին փայտեր կըշարեն .
փայտերուն բոլորտիքը մայիզ կըձըգեն ,
(որ ցորենի պէս բան մընէ , վարի ճկել-
լայ , կապիկները կըսիրեն) . փայտերուն
մէջնալ մէկ բան մը կըձըգեն , որ կրա-
կով տաքնայնէ , որոտման պէս ձան կը-
հանէ : Խըբոր կապիկները մայիզ ուտե-
լու հետ են , ույանկարծ աս զարհուրե-
լի ձանը կըլսեն , վախերնին կըթողուն
ձագերնին ու կըփախչին . ան ատենը որ-
սորդները ուղածնին պէս ձագերնին կըը-
նան բռնել : Ո՞էջերնին անանկ չուստ ու
Ճարպիկալ կըդըտնըվի , որ ան միջոցին
մէջ շուտ մը ձագերը կոնակը կըշալկէ ,
անանկ ծառի մը վր կըցաթկէ կըկենայ .
կմթէ ծառէ՝ ի ծառ ցաթկուտելով կը-
փախչի անանկ չուստ , անանկ յաջող , որ
դետնի վր անանկ հեշտ (խօլայ) չիկըը
նար

նար փախչիլ : Երբեմնալ կըքոնեն նառ
կիւին մէջը նեղ ծակմը բացոծ թողլով
կապիկները կուգան մատերնին հրելով
կըխօթեն , մէջինը հանեն ուտեն տէի ,
ան ատենը որսորդները վը կըվազեն . կա
պիկներուն ձեռվըները աղատ ըլլալով
չեն կընար շուտ մը փախչիլ , անանկ կը
բռնըլին :

Ասոնք փախչենինի՝ երբոր տեսնան որ
մէկը իրենց վը նշան կառնէ , հովուն գէմ
կըսկսին փախչիլ . և զարհուրելի ճան
մը կըհանեն կանչվատելով , ազրանին
զարնելով , որ մարդը կըվախցնեն : Որ
սորդները կընային , որ նետը (օխը) եր
բեսնին զարնեն , զերէմ ան ատենը գէտ
տինը կիյնան , բայց զարմանալի է կա
ռիկներուն Ճարպիկուիլ , հեռվանց կը
դիտեն կընային ուսկից կուգայնետը , ա
նոր կէօրէ զիրենք կըշարժեն , կըփախ
չըտին , որ նետը իրենց չիդոյչիր . երբե՛
մընալ տահա նետը իրենց չիհասած , օ
դուն (հավային) մէջէն ձեռքովնին կը
բռնեն կըխալըսին , որ Ճիրիտ խաղցօղ
վարսլետ Ճինտի մը հազի՞ւ կընայ ընել :
Երբոր մէկը իրենցմէ կըվիրաւորմի գէտի
նը կըյնի , որսորդներուն ձեռքը կըբռնը
մի , ան ատենը կըկատղին , ամմէնը մէկ
մէկ Ճնչվուտալմը մէկ աղաղակ մը
կը

կըվերցնեն, որ քոլոր անտառը կը թնտայ, մարդուն ականջը կըխնայ : Արլայ երբեմն՝ որ ծառին վը իքէն կըզարնը վին վար կիյնան, բայց ընալինի ծառին մէկ Ճիւղը կըքոնեն իրենց պօչովը, անանկ ալինտ մը կըփաթթը վին, որ թէպէտ հոն կըմեռնին կըչորնան, բայց չեն իյնար, անանկ կախված կըմնան : Ծակոր մէկը ի ըենցմէ վիրաւորվի, բայց չիյնայ, քովի եղող կապիկները ամմէնը կըվազեն հոգ կըտանին, որ ձեռք չիյնայ . ո՞րը կերթայ տերև է՝ խոտ է՝ կըփրցնէ . ո՞րը կուգայնե տը կըքաշէ կըհանէ . մէկը ձեռվներոսք եարան կընայի կըսրբէ . մէկալը տերևնե ըը կըծամէ լաբայի պէս կըշինէ, եարային մէջ կըխօթէ թիֆտիկի տեղ: Աս հոգը ցըս ցըցնելէն ետև իրենց ընկերոջ վը, կընային որ՝ վրեժալառնեն թշնամիէն . ամմէննալ երկերկու քար առած՝ անանեց կելլան ծառերու վը կըսպասեն, որ որսորդը անցնի լինինի զարնեն : Ծակ որ ան ըը չիգիտցող Ճամբորդ մը յանկարծանցնինէ ան անտառ էն, վայ կըլլայ ան մարդուն . զէրէմասէ զարնօղ որսորդը տէի, ամմէննալ ծառերու վրայէն քարեանձրէ մը կարկուտ մը վրան կըթափէն, քարի տակ կթաղէն : Անոր հմը կըլլայ որ՝ տեղ տեղ անտառներու մէջ քարէ կոյտ (ել պըն

դընթը) կըտեսնըմի ասդիս անդին ,քա,
ըերը վար կառնեննէ , մարդու մեռել կը
գտնան , չեն դիտէր թէ ով է մեռուցեր,
բայց սորզած տեղացիները դիտեն , որ
աս կապիկներուն ըրածներն են : Ը աս
անգամ կըլլայ որ երբոր մէկը իրենցմէ
կըմիրաւորվի , կմ կըսնի , ուրիշ զօրաւոր
կապիկները կատղելով ետևէ կըսնին որ
սորդներուն , ինչվան իրենց տունը (կմ
գոլիվան) կըվազեն . թէ որ դուռը դո
ցեն իրենց դէմ , անանկ հնարքներ կը
բանեցնեն , որ դուռը կբանան . հոն կավ
րեն կավըրշտըկեն . ինչ որ իրենց ձեռքը
կուգայ՝ տանը մէջէն կառնեն
կըտանին :



Վակօին ըստած կապիկներուն մէկ տեսակմընէ, պղտիկ՝ բայց սիրուն ու աղվոր : (Ծետիդի անունով կոչեցին զասի եւրոպացիք իրեն ձանին հմը, զէրէ երբեմն երբեմն ասանկ ձան կհանէ : Իր սոյը հազիւ կըհամնի կէս օտնաշափ, բայց իր պօջը մէկ ոտնաշափիէն աւելի երկանէ . երեսը մաղչունի, մութ մսի գունովէ . քը թին ծակերը քովնտի են . գլուխը կլոր, պղտիկ, ճակատին վրայի մազերը փէրչէմի ոլէս սև գունով . ճակատին վերի ծարը ճերմակ գունով . ականճները կլոր, տափակ, բարակ ու անմագ : Ո՞էկ աղվորունի մը ունի աս կապիկս արտառոց . ականճներուն առջեւէն երկու զարդ կելլան շատ զարմանալի . որ են երկու սուղուճ ճերմակ ու երկան թիւյերով, գիտես թիւմախսուս շինած գլուխը տնկած են, որ ետեւի դին կըծըռին ականճներուն վրայովը, աննկ որ՝ առջեւէն նայիսնէ չերեարւ Երեսին բոլորտիքն ալ լեցուն մազերով զարդարված է . վզին ու կուրծքին վրա մազեր ունի բաց խահվէի գունով դեղին խառնած . տակնալ մազոտէ, նասրլըչէ .

Հունի տօպրակ վզին մէջը :

Կազը մէկ ուրիշ աղվորունմընալ պօչնէ

է , որ է երկան , բրդուն , ու ձամբայ
ձամբայ , մէյմը սև մէյմը ձերմակ մազե-
ռով զարդարված : Ա ատվճներուն ըղունկ
ները մեծ են ու սուր . ոտվճները մնի գու-
նով : Իր բնուիալ ազնիւ է ու սիրելի :
կերածը պտուղէ , ընդեղէնէ , որդ , նաև
ձուկ . չորս ոտքով կըքալէ : Բայց ասոր
ձագերը խիստ տգեղ են . ամենաբն կըք
մազ մը չունին վրանին : մէկ ամսէն ե-
տե կուգայ մազերնին . երկու ամսէն ա-
ւելի ալէտք է՝ որ կատարել մանին մեծե-
րուն . երկու ամսի չափ կաթ կուտայ
մայրերնին , ետքը զօռով սանքի կըկտրէ
կաթէն : « Քիչ մը մ-ծնալէն ետե մօրը
կըռնակը կելլան , անանկ ժուռ կածցնէ
մայրերնին . երբոր յոդնի , հայրերնին
վրան կառնէ ժուռ կածցընէ . ան ատեն
ները տեսնալու բան է ասոնց խաղալները ,
շարժմունքները :

Ա տենօք Պրասիլիայէն՝ որ ամէրիքայի
մէկ հմընէ , աս կապիկս բերին փարթու-
կալ , հոն օդը ձեռք տալով շատցան . ետ-
քը փարէզալ բերին տաք օտայի մը մէջ
պահելով , (որուն տաքուիլ կըհամնէր Յ
Յ աստիճան ,) հոնայ շատցան . տեսնօղ
ները ամմէնը կըզմայիէն ասոնց զնզն
շարժմանցը վը , և ընկերուն վը :
Խնչվան հոս ասչափ ահա զանազան կա
պիկ

ալիկներու վր գրեցինք , բայց դեռ չորս
 մասին մէկը չի լրմընցուցինք . ի՞նչ զար
 մանալի աստիճանաւոր կարդ տեսակաց
 մի և նոյն կենդանւոյ մէջ , որ մէկ անու
 նու կապիկ կը սենք , և չի քննենքնէ . իբր
 մէկ տեսակմը կենդնւոյ կը սեպենք կանց-
 նինք կերթանք : ի՞նչ զարմանալի զանա-
 զանուի մի և նոյն տեսակինալ մէջ : Պինտ
 տղեղ կապիկներէն՝ ինչպէ է վերոգրել
 Վահիդան , պինտ գեղեցիկ կապիկը ե-
 լանք , ինչպէ աս (Օվիսդիդին . մէկը
 տգեղուի ունի , բայց և ճարպիկուի ու
 կարողուի շատ + մէկալը անանկ կարո-
 ղուի չունի , բայց գեղեցիկուի ունի . Վա-
 նի որ մարդս շատ երկիրներ քալեց , քա-
 նի որ նոր նոր հներ գտաւ , քանի որ մը-
 տադիր եղաւ , իբր թէ անչափ շատցն կա-
 պիկներուն դասը , տեսակը , ու թիւը +
 ու իմացանք արարչին մասնաւոր հավեսր
 որ բանեցուցերէ անմիջապէ մարդէն ե-
 տե եկած կենդանիին վր . կարդ կարդ
 վարին ջեցնելով անանկ հասուցեր անցերէ
 ուրիշ կենդանիներուն դասը : Ոչէոր մար-
 դը նոր հներ չի գտնար , մտադիր ըլլար
 մեր առջիններուն պէս մէկ քանի մը տե-
 սակ կապիկներու գիտցած պիտոր ըլլայ-
 ինք . ասչափալ գիտնալովնիս , գեռ շատ
 բան ալ կայ կապիկներու վր , որ չի տենք :

իրենց շատովուել վեր թէ որ մէկիմը ըստա
 ծին հաւատանք, միայն ափրիկէի մէջ աւել
 լի կապիկ կդառնալին քը թէ մարդ . մարդ
 ուն համբանքն իսէ ափրիկէի մէջ պազի
 հագրաց կէօրէ 160 միլիոն կըհաս
 նին : Ափրիկէին ներսի լեռները ան
 տառները բոլոր կապիկներն են բռնած .
 իրեն արեմբաւեան կողմը՝ մշնդ Արկուի
 մէն ինչվան Ա՛ռուա լիօնա գետը՝ անհա
 մար են կըսեն կապիկները : Ամմէն մէկ
 տեսակը զատ զատ տեղ ունին իրենց .
 անանկ որ՝ մի և նոյն տեղը՝ ոչ երբէք
 երկու տեսակ կըդըտնըմի : Ասկի ծո
 վեղերքը ինչպէս որ վերը գըրեցինք , լե
 ցուն է կապիկ շատ թունով և շատ տեսա
 կաւ . մէջերնին մէկ տեսակմը կայ , որ
 ուշ կընտանենայ . խիստ կատաղի է ու
 չար . սե ափրիկեցիք ասոնց վնասներէն
 խալսին տէի , յատուկ պահպան կըդնեն .
 բայց երբոր կապիկները շատվոր են , շատ
 անդամկըսաղթեն ուեերուն . ու երբոր
 յաղթող կըլլան՝ սևերուն վեր կըվազեն ,
 իրենց մատվուները աչվոնին կըխօթեն կը
 փորեն : Հինտիստան ահմատապատ քղքը
 անանկ երես առած են կապիկները , որ
 ընակիչքը պէտք է որ շաբաթը երկու ան
 գամ բրինձ է , կորեկ է , շեքէր խամիշի է ,
 դնեն իրենց տանիքներուն վեր , որ մօտիկ
 եղած

Եղած կապիկները գան ուտեն . չենէ^ա
տները կըմտնան , ան ատենը աւելի վը-
նաս կըհասցընեն :

Ունկալայի կապիկները անանկ Ճարպիկ
են , որ գողուն ըրած ատեննին , երբոք
մարդիկ վը կըհասնին , առջեկ մէկոտ
քով կիմ ձեռքով մեծ մեծ պտուղները կը-
բռնեն . ու իրեք ոտքով վազելով անանկ
կըփախցին . Խակ ամէրիքա Ռնդիլլեան
կղզիներուն մէջ կապիկ կայ , որ ամմէ-
նէն աւելի Ճարպիկ է ու աչքը բաց . ան-
անկ որ՝ ամմէն տեսակ կապիկներուն Ճար-
պիկունքը ասոր վը մէկ տեղ ժողվըված
կերեայ կըսեն : Վատ կապիկ ունեցող
ճներուն մէկնալ սէյլան կղզին է . մեծ
մեծ կապիկներ կան հօն զարմանալի ու
տարբեր տեսակներով . մէջէրնին մեծ
տեսակմը կայ՝ որ սև երես ունի , բայց մօ-
քուք Ճերմակ՝ անանկ մեծ ու լան , որ մէկ
ականճէն մէկալ ակինճը կհասնի . սէյլան
ցիք ծեր մարդ կսեպեն աս կապիկս :



Տեսիլքով տարբեր կապիկ մէկնալ Այամ
պուք ըսված թէքրուն մէջ կըդրտնըվի .
ՃիփՃերմակ ու փայլուն աւելի ք Ճերմակ
նապաստակը . աչվըներնալ կարմիր մէր-
Ճանի աչվըներ ունի . շուտովալ կընտա-
նենայ . բայց ուրիշ երկիր տարվածին ալո-
բան չուտեր , անանկով կըմեռնի :

Կապ-

Կապկին շատվորուեն պատճեռ մէկնալաս
է՝ որ քիչ թշնամի ունի իրեն յաղթօղ,
մի միայն իրեն թշնամի՝ գրեթէ օձն է,
առիւծէն ուրիշ գազաններէն կըխալըսին
իրենց թեթևուբը ծառերուն ծարերը
փախչելով, բայց օձը ուր ելլաննէ, ետեւ
նին կըհասնի, շատ անդամ կընայի՝ որ
քուն ըլլան, ան ատենը ինչլան վերի ծա-
ըը կելլայ ծառին, անանկ կուտէ, շատ
անդամ տեսնը վեցաւ՝ որ ամբողջ կապիկ

մը կուլ կուտար օձը :

Կապկին բնուեն վը թէ որչափ մօտիկ է՝
մարդու, մէկնալաս է ղարմանալին, որ
կըլրւըշտըկի մարդու հիւանդուեն ծաղ-
կի ու խզամուխի, առջինին փորձը եղաւ
1767ին մէկ տեղ մը՝ որ մօտիկ է փարե-
զի. Եկղին փորձը նոյնպէ եղաւ փարեզ
1770ին, ու ան դեղերով ըռնտցաւ կապի
կը՝ ինչդեղերով ըռնտցաւ հիւանդ մդը :
Տեսակ մը կայ կապկի՝ որոյ լեղւոյն մէջ
երբեմըն երբեմըն կըդըտնան թանձրա-
ցած քար ընկուզի չափ որ է փանդէհիր,
ունի աններդործուիր (հասիկթը) ինչ որ
ունին ուրիշ կենդանիներուն փրնդէհիրը.
բայց շատ տեղ թող չեն իտար իրենց երկ
ըէն գուրս հանելու. իրենց պիտանաւո-
րուեն համար կըպահէն :



Փ Ւ Պ :

Անցվան Հիմա մարդու մօտիկ կենդա
 նի մը ստորագրեցինք , ո՞ր Կապիկը ,
 քրուն տեսակը շատ + ամմէն մէկ տեսա-
 կին վր պատմելու ըլայինքնէ , շատ եր-
 կան պիտոր քշէր , մէկ քանի տեսակը
 միայն դնելով լմնցուցինք . չիշելով նաև
 հառարակ կապիկը , որ գրեթէ ամմէնը
 տեսած կըլլան : Հիմա մէկ կենդանի
 մը ստորագրենք , որ մէկ տեսակ մը ու-
 նի , բայց պատմուիր նոյն կենդանւոյն
 երկան ու զարմանալի , որ է Փիզը .
 Բայլոր ցամաքի վր որչափ կենդանի ա-
 րարած կան , ամմէնէն մեծ աս կենդա-
 նիս է . մէկ եակ մը ոյ՝ որ իր մեծութե՛
 ամմէնուն վր կընայ պարծիլ : Ո՞եկ ա-
 հագին թանձը լեռ մը մնէ , կենդանու-
 թի ունի , չորս ոտքի վր կըքալէ . առ
 մեծուելը հետ ուժալ ունի զարմանալի ,
 ասանկալ մեծ ու ուժով ըլլալով մնա-
 կեր չէ , խոտ կուտէ . մսակերալ չըլլա-
 լով ոչ մարդու վնաս կուտայ , և ոչ ու-
 թիշ կենդանիմը . ինքիրմէ մէկիմը հետ
 թշնամութի չունի :

Երկու դրսի կատարելութե՛ վր երկու
 ներսի աղէկութիւնալ ունենալով , կըլլայ
 ասիկայ մէկ կենդանի մը դերազանց ,

յորում մեծուի մարմնոյ, ուժ, մեծասրտութի, ու ճարտարութի, մէկ տեղ միացած կը լլան: Անոր համար ամմէն ատեն աս կենդանիս պատիւ ունեցաւ. հիները մէկ հրաշալի բան մը կըսէպէին, ու իբր սքանչելիք բնութե. ինչպէս որ իրօք է վերջին ձիգն բնուե կենդանեաց մէջ:

I. Անուն և Տեղի:

Դայերէն ասոր Փիղ կըսենք, որ է անուն հասարակ ան ազգաց մէջ ասիոյ, ուր որ կը լլայ առ կենդանիս. վասն զի անոնք Փիլ կըսեն, որ մեզի կըդառնայ Փիղ, ու ոմանց ըսածին պէս աս անունս քաղդեացւոց լեզունէն կելլայ, որ յատուկ աս կենդանիիս ոսկորը կընշանակէ, իր Փիլ տիշի: Աս Փիլ անունէս եւած կերևան ամմէն եւրոպացւոց անունները. որով յունարէն կըսվի Ավեֆաս, և լտ". Ավեֆանդուս. ավըշտը կելով շիտակ անունը, Փիլը լեֆ փոխված կերևայ. աւջեւէն ետևէնալ ուրիշ վանկէր յաւելցուցած. ինչպէս որ սովորութի է ամմէն ազգի. ուրիշ լեզունէն անուն մը ասնեննէ, մէկ քանի գրերով կը փոխեն: Արևելեան հնտստան ատեն մը Պարրէ կըսէին ասոր. անկեց լատինք Պար.

Պարրուսալ կոչեցին փիղը :

Առ կենդանիս ըլլար չեղիմանար ան
բաժիններուն կմք քլիմաներուն մէջ, որ
բարեխառն դօտիի տակ են, որչափալ
հոգ տանին ըլլար : Ատենօք 1668 ին
փօրթուղարու թղթը Գրանսայի թղթին
ժղուիճին փիղ մը ընծայ խրկեց փա-
սէզ, որ 4 տարվան չիկար + 13 տարի
միայն կրցաւ դիմանալ վերսալիայի մէջ,
որչափ հոգ տարին, լիուլի կերակրեցին,
չեղավ. 1681 ին յունիլ. մեռաւ 17 տար-
վան : Ատենօք նաքօլիալ տարին, որոյ
բաժինը օդը ցա հավան փարիզինէն տաք
է. Հոնալքանի մը տարի ապրեցաւ. իսկ
անոնք որ բէդրալուրկ տարին, մէկմէկու-
ետե մեռան, թէպէտ և աղեկ մը կըդո-
ցէին :

Ասկէց կիմացվի որ, աս կենդանիիս յա-
տուկ տեղը ասիայի մէջ՝ հնտստան է,
ու անոր առջեւի եղած մեծ կղզիները,
ինչպէս է Շեալա : Փիլիպպեան ըսված
կղզիներուն մէջ միան Անտանա կը շ-
վին շատ կայ : Աայց ամմէն կղզին ա-
ւելի՝ Վելլան կղզին շատ կայ : Ա փրիկէի
մէջ աղլանդեան ըսված լեռնէն աս դիս
վայրի փիղ հիմա չիկայ, թէպէտ և չին
ատենը կարթագինեցիք որք են թու-
նուսունէին. աս լեռնէն անդինալինչ-

վան սինէկալ գետը քիչըլոր են . բայց
 շատ կան Ահնէկալ , կուխնէա , մանա-
 ւանդ Երկիր փղոսկրէից ըսած տեղը .
 ասանկալ Գաօնկօ մանաւանդ Պամպա
 դաւառին մէջ խիստ շատ , անտառնե-
 րու ու գետերու շատունը համար . նոյն
 պէս Ոսկի ըսված ծովեզերը խիստ շատ
 ըլլալով , շատ մնաս կուտան հոն պտուղ
 տունող ծառերուն : Եթովպիս , Հապեշ
 շատվոր ըլլալով մէկ տեղ խմբով (սիւ-
 ըլլով) կըքալեն : Ասանկալ Շարեյու-
 սոյ քիթը , ու ամմէն հարաւային ափիի-
 կէ , ու անոր արեւելեան եզերքը , և ներ
 սի ցամաքը : Տեղ տեղ միայն քիցցան ,
 ուր որ մարդկան բնակութիւն շատցաւ :
 Ափիկէին կղզին Ատակասքար , ու
 իրեն մօտիկ եղած կղզին Բուզիպեթ
 անչափ կայ , որ անոր նման շատ ուրիշ
 տեղալ կայ մի արդեօք մարդ կըտարա-
 կուսի : Ամերիկա չիկայ , բայց կերեայ
 որ՝ կրնային հարաւային ամերիկայի մէջ
 շատնալ , ու ինչվան հիմա ինչպէս չիտա-
 ըին փօրդուքաները վարի ո իրենց եր-
 կիրը պրասիլիային տաք բաժիններուն
 մէջ , շատ զարմանալու բան է :

Հ. Ապորագիուսենէ և Շահնդամակնեռութէ :

Կ ենդանիս չորքոտանեաց մէջ ամ-
մէնէն տղեղ կենդանի կընայ ըսպիլ .
մէկ կենդանի մը չիկայ՝ որ իր գլուխը ,
քիթը , անկաձը , աղբաները , ոտվնե-
րը անանկ դրած ըլլայ՝ ինչպէս փիղը ,
բոլորովին նոր է ու տարբեր : Դալուխը
մեծ՝ վիզը կարծ , աչքը պատիկ՝ անկաձը
խիստ մեծ . բերանը պատիկ՝ երկու աղ-
բան խիստ մեծ , բերանը խիստ ներս՝
աղբաները խիստ դուրս . Ճիվերը խիստ
հաստ . ոտվները խիստ կարծ . իսկ քի-
թը ամմէն բանէն երկան . ու բոլոր ին-
քը մէկ մեծ միս մը , որ երկու ծարէն
երկու պօչ ունեցօղ կերևայ գրսըվանց ,
մէկը ետևէն որ է կարծ , մէյմալառջե-
էն որ է երկան , բայց պօչչէ , հապա իր
պինտ կարողական մասն է : Կերևայ որ
բնուիլ ասոր վը աշխատերէ միան դրս-
ուն մարմնոյ մեծուիլ շատցնէլու , ներ-
սէնալ ճարտարութիւր ու հանճարը . վո-
վի գրսի անդամներով որչափ որ կոսիտ
(հանդալ) կերևայ փիղը , անչափալներ-
սէն բարակ է ու աղնիւ :

Խրեք գունով փիղ կըդանըվի , ու , կամ
մութ մոխրագոյն . Ճերմակ , ու կար-

միադոյն , սև գունը հասարակ է , ձեր
մակը ու կարմիրը խիստ դժուարագիւռ
են ու խիստ համարի : Իւեկունայ թղթը
հանդիսով (ալայով) դուրս ելլալու ըլ-
լայ , չորս ձերմակ փիղ առջեւէն կրտանի
սրօֆաներով հադվեցուցած , աղբանին
ոսկի զարդերով եախութմներով զար
դարված սազած . երկու կարմիր փիղալ
հետը կրտանի : Աւ փիղը շատ հեղ գորշ
(զինձապի) աղտոտ կերևայ . վո՞զ զի ճան
ձերը փախցընելու համար իր մարմնոյն
վը փոշի (թօզ) կրցանէ . և որովհետեւ
իր մարմինը լերկ ու եղոտ է , ան փոշին
վը կալչելով սեին գունը կրփոխէ , բայց
երբոք լուացվի՝ սև կերևանայ : Ա՞որթը
թանձր է , կարծր , ու տեղ տեղ նասրը
կապած , անանկ որ ճանձերուն կՃելը
չիմանար . իսկ ուրիշ դիերը անանկ կի-
մանայ , որ զանազան հնարքներով ճան-
ձերը կրփախցընէ : Երկան մավեր մէկ
քանի տեղ միան ունի , շատը ընքվընէ .

ըուն վը է :

Վ զվըները պլատիկ են իր գլխուն կեօրէ ,
իսկ իր մարմնոյն կեօրէ խիստ պղտիկ
կերեան , բայց վաւվըռուն , կենդանի ,
ու զուարթ , և ան որ զարմանալի է , ի-
րենաչըները անանկ կրշարժէ , որ կար-
ծես թէ միշտ կըմտածէ . իր ներսի կիր-

քը իր աչվաներովս մարդու պէս կըցրցը-
նէ . անսանկ որ իրեն ներսի շարժ մօւնք .
ները կրնայ մարդ իբր թէ , կարդալ իր
աչվաներուն վը : Աս բանս սամպէն կեն-
դանիներէն կըզատէ զատիկայ . վասն զի
իրաւ որ շունը իր աչվաներովս իր ներսի
կիրքը կըցրցընէ , բայց սաստիկ չուստ
շարժելովս , չիկրնար մարդ հասկրնալ .
իսկ փիղը ծանր ու հանդարտ կըշարժէ :
Երբոր իր տրը կըխօսի , անուշմը գէպ
'ի տըր կըդարձընէ , ու մտիկ գնելու
նայլած մը կրնէ . Երբոր լսէ տիրոջ հրա-
մանը , մտմտալու նայլած մը կրնէ , եր-
բոր առաջուցմէ կուզէ իմանալ տիրոջ
հրամանը , աչվաները սրելու պէս մը կր-
նէ կըտնկէ , անսանկ որ գիտես թէ ին-
քիրեն կըմտմտայ կըխորհրդակցի , ու
չորոշէր ինչվան հզը անդամ չիփնտուէ
իր տիրոջը նշանները :

Ենկածները իր քթին պէս ուրիշ կեն-
դանիներուններէն աւելի դուրս ելած
են , խիստ մեծ են ու խիստ երկան .
Բայց իր մարմնուն հետ նայիսնէ , իշուն
անկածներէն աւելի համեմատ են . հա-
սարակօրէն կախված են ու դէպ 'ի գլու-
խը տափկըցած մարդու անկածի պէս ,
բայց ուզածին պէս ծանր ծանր կըշար-
ժէ , կըբանայ , կըզարնէ , վեր կըվերցը-

նել, ասով իր անկածները իրեն էլփազ
գելի տեղ կըքանեցընել, փոշիկն ու ձան
ձերեն իր աչվըները պահելու, ու չոր
բունելու. մարդսալիրեն վահանի (ղալ-
խանի) տեղ կըքանեցընել. ասոր աղեկ
ձեռվ շինած ղալխանը տեսանք մեծե-
րու համար արծըթով զարդարված, որ
թեթև է ու սուրը չեկտրելը կըսեն,
Փղին լսողութելը կատարեալ է. նուա-
զարաններ (չալղըներ) խիստ կախորժի.
անանկ որ կերեայ որ երաժշտութել (մու-
սիքին) կըսիլէ. երգելուն չափելը գի-
տես թէ կըքունէ, ու տավուլին թռամէ
փեղային ձանին կեօրէ իր ոտվըները
կառնե, :

• Ի. իթը կամխօրթումը պինտուա-
կան անդամն է աս կենդանիիս, ու պինտ
զարմանալի գործիք մէկ բնաբանի մը
կեօրէ որ կըսինտե, ասիկայ բոլոր շի-
նած է անհամար մանր մանր թելերով
ու ջլերով, անանկ որ բոլոր իր մարմնուն
մէջը որչափ թել կի՞մ ջիլ կայ մէկ տեղ
բերես, քթին մէջի եղած թելերնալ
ջիլերնալ անչափ կըգտնաս. ասանկ թե-
լերով շինած ըլլալով, սաստիկ շարժուն
է, ու սաստիկ զգայուն. կընայ իր խօր-
թումը ծուել ծալլել պտըտցընել թոթ-
վել երկնցընել կարձեցընել: Խօրթու-
մին

մին ծարը կըլօր կըվերջանայ հալխայի
 մը կիմփերվազի մը պէս . հալխային վերի
 դին երկնցած քան մը ունի մատի պէս .
 հալխային մէջի դին կըձևանայ խորունկ
 քեասէ մը . քեասէին մէջ տեղնալ եր
 կու ծակ կայ , որ է քերան երկու ճամ-
 փու . անոնցմով շունչ կառնէ , անոնց-
 մով կըհոտվրտայ : Ան մատի պէս քանը
 որ ըսի , անով կընէ փիղը ամմէն քան ,
 ինչ որ մէնք կընենք մէր մատվներով
 մէր ձեռքով . ան մատովը դեանէն խոտ
 ու ծաղիկ կըփրցընէ կըժողվէ , մէկիկ
 մէկիկ ընտրելով , պինտ պզտիկ ըստակ
 ալ ըլլայ՝ գետնէն կըժողվէ . չունան
 կըքակէ . դուռ կըքանայ կըդոցէ բալի-
 քը դարձընելով , սփրկիւն քաշելով .
 գործիք մը տաս գրչէնալ աւելի պզտիկ ,
 անով սորվեցնեմնէ ուրուական (խասկա-
 ճա) գիր մը կըդըէ : Ասանկով ամմէն
 գործիքնէրուն մէջ որ բնութիւն տրվե-
 րէ կենդանինէրու , կերևայ որ փղին
 խօրթումը պինտ կատարեալն է , ու
 պինտ զարմանալին . ասիկայ չէ թէ մէկ
 գործիք մընէ , հապա մէկ նոր զգայուն
 մը իրեք զգայուն բաղադրաված . ձեռք
 է , քիթ է , ու նաև քերնի գործք կընէ .
 աս իրեք զգայունալ մէկ տեղ միացած
 մէկ նոր բան մը ըլլալով , իրեքնալզօ-

բաւոր են Եղեր, մէկմէկէ ուժ առնելով։ Ապի խօրթումովը բերնի պէս մէկ ծծելով մը կը քաշէ հեղուկները . կը վերցրնէ պինտ ծանր մարմինները . իր խօրթումին ծարը անոնց դպցընելով , ուներսէն իր շնչելով՝ թոքին (Ճիերին) կարողութիւր կը միացընէ մատվըներու դործքի հետ : Թթին հոտառութիւալ սաստիկ զօրաւոր է ու ընտրող , ամմէն խունկերուն ծուխը , հոտառոր ծաղիկները խիստ կը սիրէ . ծաղիկները ընտրելով մէկիկ մէկիկ կը փրցընէ , փունջ մը (տեսթէ) կը շինէ . Երբոր հոտավը կը կշտանայ , բերանը կը տանի : Չեռքնալ ասանկ գործքի վեր ըլլալով , մեր ձեռքին աւելի կատարելութիւննի . չորս դին կը նայ Ճկել , կը նայ դարձընել . ասովիր շօշափողականնալ ամմէնէն զօրաւոր կը լլայ . ինչ բան ըլլայ՝ ամմէնը մէկին նաև կտոր կտորալ կը նայ շօշա-

փել :

Աս խօրթումին Ճկողունը կուտայ իրեն իմանալ դրսի ձևերը . ծծելու զօրունը կուտայ իմանալ ծանրունը . հոտառութիւր կուտայ իմանալ անոնց որակունը , Երկայնունը կիմացընէ անոնց հեռաւուրունը : Ասանկով փիղը մէկ անդամով մէկ գործողութեր կը հոտավայ , կը շօ-

շա

շափե՛, կը ծըծէ՛ . անկեց մէկէն կիմա-
 նայ մէկէն կը դատէ՛ շատ բանի վրայ ,
 որ ուրիշ կենդանիները ետեւէ ետեւ
 պիտոր իմանան . , բայց ասիկայ մէկէն
 կիմանայ բանը , աղէկ կը մբռնէ , ուշ
 մաքէն կելլայ : || Կ զի փափկուի շօշափ-
 ման , նրբութի հոտառուե՛ , դիւրութի
 շարժման , զօրութի ծծելոյ՝ աս ամմէն
 բանը միացերեն փղին մէկհատիկ խօր-
 թումին ծարը : || Ա գործիքիս համար է՝
 որ փղին յիշողութիւն ու իմանալը ուրիշ
 կենդանիներէն շատ վեր է , չէ թէ իր
 ըղեղին համար , որ ուրիշ շատ կենդա-
 նիներու քով պղտիկ է իր մարմնուն նայ-
 ելով . անոր համար շատ հեղինակներ
 ըղեղը չեն դներ աթոռ զգայուեց , հա-
 պա գլխին ջելերը ու մանը թելերը :
 Բայց աս կենդանիիս վը աս բանս կայ
 վերոգրեալ գործիքին դէմ , որ որչափ
 իր խօրթումը ձկող էնէ , անչափալ իր
 մարմինը թանձր է , ու իբր անձկելի .
 Ժիկընար զինքը գարձընել , ետեւը դառ-
 նալ եթէ ոչ կէս կլոր մը ընելով . անոր
 համար որսորդները որ ետեւէն կամքո-
 վընտի վրան կը վագեն , կունենան ատեն
 փախչելու , կմ' նորինոր զարնելու , ինչ-
 վան որ փիղը ինքիրզինքը գարձընէ :
 Ճիվէրնալ թանձր է , շիտակ , ու քիչ

Ճկող, չիկրնար ծալլել բայց եթե, կա-
մաց կամաց ու դժուարաւ . խիստ կպած
ալ են իր աղդերներուն (խալքաներուն)՝
Հետ : Իր ծնկվըները մարդու նման իր
Ճիվերուն մէջ տեղն է, և ոչ փորուն մօ-
տիկ ինչպէս ուրիշ կենդանիները . և ոչ
երկու ծալլըված ինչպէս ձիուն ու կո-
վուն ետևի Ճիվերը, ու թէնդտ կարծը
են ու չիճկող ինչպէս որ ըսինք, բայց
ասանկալ ըլլալով քանի որ փիզը պզտիկ
է ու առողջ, կրծալլէ պառկելու հինք,
կմհեծցընելու ու բեռցընելու համար .
Երբոր ծերանայ կամ հիւանդ ըլլայ, աս
շարժմունքս իրեն անանկ դժար կուգայ
որ, կուզէ ոտքի վը կենալով քնանալ .
ու թէ բռնի (զօռաքի) պառկեցընեն,
ետքը պօճուռդաններով պէտք է վեր
վերցընելու :

Ոտվըները կարծ են ու պզտիկ, մանա-
ւանդ եօքձեն ինչվան մատը խիստ կարծ
է, ու չիմացվիր, վոր զի Ճիվերուն մոր-
թը կուգայ կը կախվի մատվըները կը դո-
ցէ, անանկ որ մինակ Ճիվեր կերեայ վե-
րէն 'ի վար շիտակ սեան (տիրեկի) պէս,
կամ ծառի մը պէս : Մատվըներնալ ա-
նանկ կարծ են, որ հազիւ թնթզուց
մուն դուրս ելած կերեան . Ճիվերուն
մորթնալ դոցերէ իր մատվըները, միան
ըղուն .

ըղունկի մը պէս դուրս ընկած կերևան։
Հինգ մատ ունի, հինգ ըղունկ, բայց
ոմանք չորս, ոմանք իրեք ըղունկ ունե-
ցող տեսնըլեցան, որ պատահական է։
Ոտքին տակը կարծր կաշի է եղջրի
(պույնուզի) պէս։

Առջեկի Ճիվերը ետևիններէն աւելի
բարձր կերևան։ Ճիվերուն հաստուիը
15. 18. բութ տրամագիծ ունի + 5, 6
ոտնաչափ բարձրութի. ասանկով երկու
անգամի չափ աւելի բարձր են մարդուն
Ճիվերէն։ անոր համար մարդը երկու
քայլառնենէ, փիղը մէկ քայլ մը կառ-
նէ. իր հասարակ քալելը ձիունեն չուստ
չէ. հասարակ քալելով գրեթէ անչափ
ճամբայ կընէ, որչափ որ ձին միջակ վա-
ղելով կընէ, իսկ երբոր արտորցընէ
վազէ, ձիուն չորս ոտքով վազելուն կը-
հաւասարի. իր սովորական քալելովը օրը
առանց յոքնելու 50. 60. միլ ճամփայ կը-
նէ. երբոր արտորայ վազէ, օրը 100. +
120, միլ կընէ. անանկով մէկ օրվան
մէջ վեց օրվան ճամբայ կընէ։ Ը ատ հե-
ռվանց կըլավի իրեն քալուածքը և կըր-
նայ մարդ անոր ետևէն երթալ դանալ,
վասն զի ոտքին կոխած տեղերը անանկ
մէծ մէծ նշաններ կըթողուն, որ 15. 18.
բութ տրամագիծ ունին։ Ը ատ դժա-
բու.

ըութիւն կըքաշէ դարեն (տիք եօխուշէն) վար իջնալնինի . ետեւի ոտվաները պիտոր ծալլէ որ , մարմնուն առջի դին վար իջնալով հաւասարակշուութիւն պահէ , ու իր մարմնուն ծանրութիւն ինքիր զինքը վար ճգել չխտայ : Ի այց աղեկ կըլողայ . ունենալով տարածել կուրծք , մեծ փոր , մեծ թռք (Ճիեր) , մեծ աղիք և , որոնց մեծ մասը օդով (հավայով) լեցված ըլլալով , ու ան բաներով որ ջրեն աւելի թեթև են , իր մարմինը ուրիշ կենդանիներէն քիչ կըմտնայ ջրին մէջ , ու քիչ ալ արգել կուտայ ջրին դէմ . անոր համարքիչ մը ուժ տալով ուրիշներէն շուտ կընայ լողար , թէպէտ և ոտվաներուն ու Ճիվերուն ձեւ ներհակը կըցըցընէ ; Պօջը աս կենդանիիս խիստ բարակ է , շ կամ 3 ոտնաչափ երկան . ծարը փիւս կիւլի պէս հաստ մազեր ունի անանկ կարծը որ երկթէ թել կըլմանի , ու մարդ ձեռքով քաշելով չիկրնար փրցը նել . աս փիւսկիւլը ափրիկէի սեկրուն առջին շատ համարի է անչափ՝ որչափ քու ամբողջ մէկ փիղը , ինչվան մէկ պօշն համար երկու իրեք գերի կուտան . մէյմը որ զարդի տեղ կըքանեցընեն իրենց կնկատիքը , մէյմալ որ աւելորդապաշտութ մը զօրութիւն մը կուտան անոր

ու կըպատունեն, անոր համար սևերը
հասարակօրէն նեղ ճամփանէրը, ուր
որ փղին դժար է դառնալ, էտևէն կը-
վազեն, մէկ զարնելով պօջը կըկտրեն.
աւելորդապաշտուիր մըտվընին խօթե-
րէ որ՝ փիղը կենդանիքէն մէկ զարնե-
լով կտրըվինէ ան ուժը կունենայ, չէնէ

ըլլար :

Ինգվըները Երկան մազ ունի. կենդա-
նեաց մէջ մարդը, կապիկը, ու փիղն է՝
որ իր արտեանունքը ասանկ մազերով
զարդարված ըլլայ, ու ընգվի ձեացու-
ցած ըլլայ։ Խակ իր մարմնուն վր մէկ
քանի տեղ միան Երկան մազ ունի։

Իերանը, լեզուն, շրթունքը չեն ծա-
ռայէր իրեն ծծելու, քաշելու իր խմե-
լքը, ինչպէս որ կըծառայեն ուրիշ կեն-
դանիներու. ասկէց կերևայ որ ծագեր-
նալ մօրը կաթը խօրթումովսին կըքա-
շեն, ետքը բերննին կըտանին. մանա-
ւանդ որ ուրիշ կենդանիներնալ հոտվը-
տալով կիմանան ուր տեղ ըլլալը մօրը
կաթը. փղին հոտառուի իսէ ծծելուալ
ուժ ունի, թէնդատ արխստոտէլ ու ելիա-
նոս բերնով կըծծեն կըսեն։

Վղրաները անչափ համարի Եղանակու-
տուրի մէջ, որ աւելի կըծառայեն մար-
դու կընայ ըսվիր, քան թէ իրեն. մէ-
ջեր

ծերնին երկանը կըդտնըվին ինչվան մար-
 դու չափ , ինչվան 9. 10 ոտնաչափ . հաս-
 տուելը կան որ՝ ինչվան բարակ մարդուն
 մէջքին չափ կըլլան . ծանրութիւն՝ 30 ,
 օխայէն սկսելինչվան 40. 60. 80. տեղ
 տեղինչվան 100 . օխայ կըկշռեն , մա-
 նաւանդ կուինէա ու փղոսկրէից երկ-
 րին մէջ : Երբոր ծերանայ փիղը ասչափ
 ծանրութիւն իր աղքաննէրուն իրեն նեղու-
 թի կուտան , մանաւանդ որ շիտակ դէպ
 'ի վեր կեցած չեն՝ այլ քովընտի , խիստ
 կըյոգնեցընէն գլուխը որ վար ծռել
 կուտան , անանկ որ քնանալու ըլլայնէ ,
 երբեմն ախոռին պատը կըծակէ , աղքա-
 ննէրուն ծարը հոն կըխօթէ որ քիչ մը
 թեթևնայ : Առսկովստան սիպէրիացիք
 զետնի տակէն կըհանէն մէծ մէծ աղ-
 քաննէր , մանաւանդ մէծին պէտքոսի հրա-
 մայէլին ետեւ 1722ին խիստ շատ կըդտ-
 նան . աս աղքաններէն ամմէնը փղի աղ-
 քաննէր չեն , թէպէտ փղոսկրի ընութիւ-
 ունին , հապա Ամմօնդ ըսված մէկ նոր
 կենդանիի մընէն , որ գետնի տակ կըլ-
 լայ կըսէն . բայց խիստ շատալ կան որ
 նման փղի աղքաննէր են : Ծակ ինչպէս
 կըդսարնվի հոն փղի աղքայ , ուր որ բը-
 նաւ փիղչիկայ , երկու կարծիք կայքնա-
 քաննէրու . մէկը կըսէ՝ որ հին ատենը

ՀԱՅԱ

Հոնալ Փիղ կը դանը վիր , եւոքը հատան +
անոնց աղբանէրը ոսկորները հիմա զ ետ-
նի տակէն կելլան . մէ կալը կը կարծէ
որ՝ հինտիստան եղած փիղէրուն դիակ-
նէրը (լէշէրը) ատեն ատեն զ ետերուն
ջուրէրը որ՝ ի դէպ' ի սիպէրիա կը վազէ-
ին մանաւանդ հին ատենը , տարին հոն
ձգեցին , անոնք են որ գետնի տակէն
կելլան :

Յ. Շահունդ և Անունդ :

Փիղ մը ինչը ան 120 տարվան ըրլայ ,
չիմօտիկնար մատակ (տիշի) փղին , չի-
ծնանիր . իրենց մօտիկնալու ատեննալ
մէ կէմը մանաւանդ մէ կմէ կէ չեն ուզէր
տեսնը վիլ . իրենց հօտը (սիւրիւն) կը-
թողուն , գետերէն կը հեռընան , խո-
րունկ անապատնէրը թանձր անտառ-
նէրը կերթան կը մտնան մատակին ձա-
նովը : Ի՞նոր համար մարդու ձեւք որ-
չափ փիղ կայ , ամմէննալ վայրենի են ,
լեռը ծնած են . փիղ մը չիկայ որ՝ մար-
դու մէջ մարդու առջին ծնած ըլլայ .
հինտին թկւորները որչափ որ ուզեցին
շատցնելու ուրիշ կենդանիներու պէս
չեղավ : Այս կը ցըցընէ որ՝ փղին քով մէկ
զգայութի մընալ կայ ուրիշ հասարակ
կեն .

կենդանիներէն վեր . անոր համար չի
ները օրինակ ժուժկալութե կըքերեն
աս կենդանիս . մատակի համարալ չեն
կունի՞ր իրենց մէջը ուրիշ կենդանինե-
րու պես :

Իր ձագը երկու տարի յարդանդի կըմը-
նայ . ան երկու տարվան մէջ արուն ա-
մնենին չփոփչիր մատակին . երկու տա-
րիէն ետև կըքերէ մէկ ձագ մը . մէկէն
աւելի ոչ երբեք կըքերէ : Առ թէպէտ
ասչափ ուշ ու քիչ կըծնանի , բայց իր
կեանքը երկան ըլլալով , շատ կըգտնը .
վի աս կենդանինես . վոր զի դնենք որ շու
տարի կատըրի փիղը , ու 120 տարվան ըլ-
լայնէ կըծնանի ամմէն մէկ իրեք տարի ,
300 400 փիղ կըքերէն ամմէն մէկը . իր
թշնամիներնալ քիչ ըլլալով , շատ չեն
կորսըփիր ասոր ձագերէն : Անոր համար
տաք երկիրները ամմէն տեղ կըգտնը .
վին աս կենդանինես ինչպէս որ դրեցինք
1. թիւը . մինակ Ծ իամու թղւորը իր
որութե մէջ շու հազար փղի չափ ունի
մարդու ձեռք , թողառը վայրի փիղէ .
ըը որ անտառները ու լեռներն են :
Հասարակ կերակուր փղին է խոտ , տե-
րե (եափրախ) , արմատ (քէօք) , ու
մատղաշ ծառէր . իսկ պտուղ , բրինձ ,
ցորեն , ու ամմէն ընդեղէն (զահըշ)

շատ

շատ աւելի ախորժական է իրեն . բայց
միս կամ ձուկ որչափ անօթի ըլլայ չու-
տէր . հապա բան չիդտած ատենը գե-
տինը կըփորէ , ինչ արմատ ըլլայ գուրս
կըհանէ կուտէ . նաև ծառերուն Ճիւ-
ղէրը որչափ հաստ ըլլայ կըծամէ կու-
տէ : Քօքքօ ըսած ծառը , Պանանիէ ,
Վարմաւենի (խուրմայի ծառ) , Վակու ,
ասոնք որովհետեւ կակուղ ծառեր են ,
կուտէ չէթէ մինակ տերեւը ու պտուղը ,
հապա նաև Ճիւղէրը , բունը , ու արմա-
ար : Երբոր խօրթումովը չիկրնայ փրցը-
նել Ճիւղէրը , աղբաներովը արմատեն
(քեօքէն) կըհանէ ծառը , անանկ կը-
փրցընէ . Պինտ սիրական ծառերէն մէկ
նալ թուրունձն է . ասորալ ծաղիկը ,
պտուղը , տերենէրը , նաև մատղաշ
փայտնալ կուտէ :

Տեսնելու բան է Երբոր իր խօրթումով
ծառին Ճիւղը կըկոտը , ու վրայի տե-
րենէրը մէկիկ մէկիկ կըփրցընէ կուտէ .
մէյմընալերբոր իր առջին ժողված խոտ
ճգէս , որչափ անօթի ըլլայ՝ մէկէն չու-
տէր , աղէկները գէշէրէն մէկիկ մէկիկ
կըզատէ , մէկիկ մէկիկ կըթոթվէ՝ որ
որդ (պէօճէկ) կմ աւազ (խում) վրա-
նին կպած ըլլայ : Կապոց մը ցորենի
տաս , ցորենը կուտէ . յարդը (սամանը)
կապ

կապ կըշինէ . սինեքլիկի տեղ կըբանէ .
յընէ :

Որովհետեւ խմբով (սիւրիով) կըքալեն ,
խմբով կարծըլին , երքոր կերակուր չեն
գտնէր՝ կըցրվին . ան ատենը մէկը ա-
նոնցմէ կերակուր կօթ արտ մը գտնայ ,
կըթողու չուտէր . Եր ընկերներնալ կը-
կանչէ որ մէկ տեղ ուտեն . ասանկով
շատ կավորշտըկեն վարուցան եղած գե-
տինները : Անյմը որ՝ շատ ուտելիքի կա-
րօտ ըլլալով՝ շատ կըփոխփռտեն տեղեր-
նին մէկ արտեն մէկալ արտ . մէյմընալ
որ իրենց մարմինը ծանր ըլլալով շատ
աւելի ծնաս կուտան իրենց կոխկըռտե-
լովը . կըլլայ որ ամբողջ գեղի մը ար .
տէր որչափ որ բոլորտիքը գտնըլիննէ ,
մէկ ժամու մէջ կավրեն : Անոր համար
խեղջ գեղացիները միշտ արթուն կը-
կենան , կընային որ իրենց հողը չիմո-
ցընեն ազաղկելով , մեծ մեծ կըակնէր
ընելով իրենց բանեցուցած հողին բո-
լորտիքը : Բայց կըլլայ որ աս ամմէն ի-
րենց զգուշութիները պարապ կըլլան .
շատ հեղ փիղերը չիվախնալով , ներս
կըմնան , աս դիս ան դին կըցրվին . ի-
րենց ընտանի կենդանիները կըփախցը-
նեն , անոնք փախցընելով , տէրէրնալ
կըփախցընեն , ու երբեմն կըփլցընեն
նաև .

նաև իրենց պատիկ տները դետնեն ինչ-
վան վեր :

Որովհետեւ աս կենդանիիս մարմիննալ
ստամբունալ (միտեն) մեծ է, չ ոտք ու
կէս կմ 4 ոտք երկան, ոտք ու կէս լան,
ձիու միտեին նմանելով քան որ կովու.
ասչափ մեծ ամանը լեցընելու՝ միշտ կա-
րօտ կըլլայ ուտելու, անոր համար միշտ
զբաղել է խոտ հանել, տերև ժողվել,
մատղաշ ծառերուն ձիւղերը կըտըրտել.
օրը մէկ 50 + 60 + օխայի չափ խոտ կա-
րօտ է ուտելու : Ինտանի փիզը որով-
հետեւ շատ փափուկ է ուտելու, պէտք
է օրը 30 + օխայի չափ պրինծ տալ կամ
հում, կմ ջրալ եփած ապուրի պէս, որ
իր ուժը վրան պահէ + լաւ կըլլայ պրին-
ծը աղէկ մը եփել, ու արդար եղով շե-
քերով խաւնելով մեծ մեծ գնտակ ընել.
25 օխայի չափալ հաց պէտք է տալ. աս-
կեց 'ի զատ միշտ ծառի տերև կմ խոտ
տալու է իրեն՝ որ հովահըի ներսի դին,
որովհետեւ միշտ տաքնալու հետ է :

Իր խմելքը ուբիշ կենդանիներու պէս
ջուրն է. Երբոր պիտոր խմէ, խօրթու-
մովը կըքաշէ ջուրը, խօրթումին ծարը
կըխօթէ բերնին մէջ շատ ներս ինչքան
լեզուին արմատը, հան ջնելով դուրսմ
պայի պէս ջուրը ներս կըխրկէ, անանկ
ձան

Ճան Հանելով որ գիտես թէ խրպայ կը-
պարպեն , իր խմելուն ու ուտելուն չեն
ծառայէր իրեն ոչ լեզուն , ոչ բերանը ,
ոչ շրթունքը : Խիստ կըսիրէ դինի , ըրա-
խի , ու ուրիշ ոգելիր խմելը քնէր թէ որ
ամանը ցըցընես ու խոստանաս տալու ,
պինտ ճանը աշխատանքիալ դնես , կը-
նէ : Տեսնելու բան է՝ Երբոր շիշէ մը
ըրախին գետինը դնես , խօշթումավը
կըբոնէ կըվերցընէ շիշէն , բերանը կը-
տանի , բերնին մէջը ամմէննալ կըպար-
պէ . Ետքը շիշէն առանց կոտրելու գե-
տինը տեղը կըդնէ : Կերևայ որ թիւ-
թիւննալ կըսիրէ , բայց ըդեղը կըդար-
ձընէ կըդինովցընէ :

4. Բնաւորութիւն և Շարդարութիւն :

Աս կենդանիիս վը ասէ զարմանալին՝
որ որչափ դրսէն իր յաղթանդամ մար-
մնովը անձունի հաստ բան մընէ , անչափ
ալ անոր դէմ ներսէն իր բնութիւնը ,
իր զգայուինէրը , իր մտածմունքը բա-
շակ են , որ մարդը կըզարմացնէ : Պինտ
առաջ ունի մէկ ծանրութիւն մը , մէկ մե-
ծահսդիութիւն մը , մէկ խուչեմութիւն մը ,
շրջահայեաց տեղին կեօրէ պարագային
կէօրէ շարժելով . մէկ չեղուի մը , մէկ

քաղց.

քաղցրութիւնը , մէկ հնազանդութիւն
մը իր տիրոջը , մէկ ճամփով շարժիլ մը ,
մէկ ճարտարութիւնը , մէկ շուտ խօսք
հասկընալ մը : Անանկ որ մարդէ ետև
կենդանեաց մէջ խելացի ու խօսք հաս-
կըցող աս կենդանիս է կապիկէն ու շնէն
վեր : Ասկէց 'ի զատ ունի բարեխառ-
նութիւնը վերը գրեցինք :

Հնազանդութիւն փղին զարմանալի է իր
տիրոջը հետ . Երբոր հետը անուշութք
երթըցվի , Երբոր իր ուղածը տրվի , ա-
նանկ ընտանի հնազանդ կըլլայ տիրոջը
ինչպէս որ մարդ մը հաւատարիմ ու ա-
նուշբարեկամ ըլլար իրեն . գիտես թէ
ան ատենը ուրիշ բան չիպակսիր իրեն
բայց եթէ մէկ խօսիլ մը . Երբոր որը
հեծնալու ըլլայ , իր ոտքը անանկ կերպ
մը կըկեցընէ Երկնցընելով , որ աստի-
ճանի պէս կըլլայ : Կրեն առաջնորդը որ
Քօռնաք կըսվի , հասարակօրէն վզին
վը կըհեծնայ . ձեռքը սանձ կօմ մտրակ
(իւլար , մօտուլ) չիկայ , հապա անոնց
տեղը մէկ Երկան Երկաթ մը դաւազա-
նի պէս , ծարը ծուռ ու սուր ճանկ ու-
նի . անով կըզարնէ դլմաւն՝ անկաճին
դիացէն , կօմ ուր որ գիտէ որ փափուկ
տեղն է դլմաւն . ան զարնելովը կիմացը-
նէ իրեն դաւնալը , շուտ քալելը և . աս
Եր-

Երկաթը որ ուրիշ կենդանիի մը զար-
նելնէ կրսպաններ , հազի՞ւ կանցնի փղին
մորթը (տէրին) . Երբեմն կատղած ըլ-
լոյնէ , ասալ հերիք ըլլար զսպէլու :
Երբոր շատ սորված է իր քօռնաքին ,
շատ հեղ միան խօսքը հերիք կըլլայ ի-
րեն . լո՞վի քիչ մը ատենի մէջ կըսորվի
ձան հանելներուն նշանակութիները ,
որ ձանը հրամայող է , որ ձանը բարկա-
նալու է , կիմանայ . անոր կեօրէ զինքը
կըշարժէ : Փղին հնագանդիլը ու հնա-
գանդեցնելը տեսնալու է՝ Երբոր նոր
բռնած վայրի փիղմը կըդնեն Երկու ըն-
տանի փղին մէջ . կերակուր կուտան վայ-
րի փղին , թէ որ իր կատաղութենէն
չուտէնէ , քովի ընտանի փղերուն կը-
հրամեն որ զարնեն . անոնքալ շուտ մը
տիրոջը հրամանը կատարելով , նոր բռ-
նած փղին Ճակտին , գլխուն , իրենց խօր-
թումովը կըզարնեն . Երբոր վայրի փի-
ղը մէկին դէմդառնայ բարկանայ , մէ-
կալ փիղը կըզարնէ , Երբոր ասոր դէմ-
դառնայ բարկանալով , մէկալը կըզար-
նէ . անանկով չիդիանալով որ դին դառ-
նայ , կըհնագանդի :

Ա. հ հնագանդուիր փղին կուգայ՝ իրեն
ընական հեղութի մը ունենալէն . ա-
սոր վրհիներէն մէկ հեղինակ մը սդրա-
լին

վոն ըսված առանկ կրդրե : || Փիղերուն
 բնութիր անանկ հեղ (մաշճուպ) է որ ,
 բանական կենդանիի խիստ կրմօտիկ-
 նան || : Անկ ձանապարհորդ մընալ կը-
 ուէ որ , || Տեսայ պազի փղեր , որ աւելի
 խոհեմ կերևային ինծի , քան թէ պա-
 զի տեղերուն մարդիկը || : Երբոր փիղը
 լեռները իր ազատութե մէջն է , մէկի
 մը չիդպչիր . մանաւանդ որ մնակեր ա-
 բիւնախանձ շըլլալով , կատաղի չէ , մէկ
 կենդանիի մընալ վնաս չիտար , թէ որ
 իրեն չփըրպչին : Կա ուժը ցաւ ունեցած
 ատեննալ ամեննեին չիդործածէր ուրի-
 շը վնասելու , հապա միան զինքը պաշտ
 պանելու համար . անդամ մը հնտատան
 ծեծի մէջ փիլ մը խոցվեցաւ . զարհու-
 րելի շընչվսոտալով պոռչըալով զօրաց
 մէջ վաղել սկսաւ իր ցաւէն , զինունորին
 մէկը չիկընալով փախչիլ՝ փղին առջել-
 ընկաւ , փիղը վրան չիկսիեմ տէի խօր-
 թումովը կամացուկ մը վեր վերցուց ,
 մէկ դէ դրաւ մարդը , անանկ իր վաղե-
 լը առաջ տարաւ : Երբոր մարդու ձեռք-
 ալ նոր ընայ , առջի բերանն է միայն
 որ կըկատղի , մէյմը բոնըվելէն ետեւ
 ամմէն կենդանիներէն չեղու հնազանդ
 կըլլայ մարդուս . մանաւանդ իր հոգա-
 ցովին (սէիսին) չետ սաստիկ սէր կը-
 կա

կապէ : Երբեմն միայն յանկարծ կպտա-
 ղութե՛ մէջ կը յնայ . ան ատենը շակը-
 վելու յոյս կայնէ , հաստը երկըթէ շղ-
 թայով (զի՞նձիլով) պէտք է կապել , եր-
 բորյոյս չիկայնէ , պէտք է մորթել : Եր
 կատաղութե՛ մէջ կը լլայ որ՝ յանկարծ
 կը սպաննէ զինքը հոգացօղը (սեխոր) ,
 որուն հետ առաջ աղեկ սորված էր ,
 բայց ետքը երբոր կիջնայ բարկութեր ,
 անչափ կը ցաւի ինքիրեն , որ կը յնի կը-
 մեռնի , ինչնդս որ կը պատմէ արրիանոս :
 Աըկատղի կը բարկանայ մէյմը թէ որ ա-
 պէրախտութի (նամքեռութե՛) ընեն
 իրեն , ու թէ որ խաբեն : Ենդամմը տը-
 գան ըսված քաղաքը հինտիստան փեղ-
 մը իր հոգացօղը մեռուց , վասն զի բան
 խոստացերեր տալու , ետքը չիտրվավ .
 ասոր ինի կը ցաւեն կատղելով՝ մէկ յան-
 դիմանելով մը մէկ կանչվուտելով մը իր
 երկու պկափի զաւակնալ առաւ փղին ոտ-
 քին տակը ձգեց ըսելով , որովհետեւ ա-
 սանկ ապէրախտութի ըրիր , ասոնքալ
 մեռցնէ , իսալ մերցնէ . փիղը որ դեռ իր
 բարկութե՛ մէջ էր , ասլսելով մէկին ին-
 քիրեն եկաւ հանդարտեցաւ . ու իբր թէ
 զզջալով իր ըրածին վը , ապէրախտութ-
 եակը հատուցում ընելու համար , խօր
 թումը երկնցուց , մեծ զաւակը առաւ

իր

Եր վկին վկր հեծցուց . իբր թէ հօրը տեղ
զաւակը ուզելով իրեն հոգացող դնել .
ու մէկը չիթողուց որ իրեն հոգացող
ըլլար ու առաջնորդ :

Ենգամ մընալ փարեղ քաղաքը մէկը
կըցըցընէր փղին բերանը բան պիտոր
նետէ տէի , բայց բան մը չինետեց չիտը-
վավ . բարկանալին խօրթումով զարկաւ
մարդը դետինը ձգեց , ոտքով կոխել
սկսաւ վըրան , ու մէկ ոտքը կոտրեց . աղ-
բաներովալ կուզէր փորը ծակել , բայց
ետքը թող տըվավ : Եսանկ խաբելու
պատճառի համար որիշ հեղմալ մարդ
մը սպաննեց պատին զարնելով : Պատ-
կերհան մը կուզէր քաշել աս փիղս եր-
բոր բերանը բացած խօրթումը վերցու-
ցած ըլլայ . անոր համար իր ծառան պը-
տուղ կը ձգէր բերանը , որ բերանը բաց
մնայ . շատ հեղալ կըցըցընէր որ պիտոր
տայ , բայց չէր իտար , կըխաբէր . բար-
կացաւ փիղը , ու իբր թէ իմանալով ով
է պատճառը , ծառային տեղը պատկեր-
հանին վկր հեռըվանց խօրթումով ջուր
ցըցընքնէց , ու քաշած թուղթը թըր-
ջեց :

Ակէմընալ կըքարկանայ փիղը թէ որ
իրեն ինաս մը տան , իր հոգացող կաւա-
շարնալ ըլլայ . թէ որ անմեղ տեղը զար-
նէ ,

նէ , կըբարկանայ , ու իր բարկութեր
 կըլմընցընէ վրէժինդրելով . ով որ իրեն
 դպչէ վասս մը տայ , չիմունար անիկայ .
 առեն կըփնտրուէ իր վրէժը հանելու :
 Անտառի մէջ առջեգելոյ իրենց խում
 ըլ (ոիւրիւն) , թէ որ չիդըպչիս՝ բան
 մը ըներ , բայց թէ որ մէկի մը բան նե-
 տես , խոցես , կամ նախատինք տաս ,
 վրադ կըվազէ , իր խօրթումին մէջ կառ-
 նէ , փաթթելով կըսըխոմէ կըսպաննէ :
 Անչափ արթուն են կըսեն հին հեղի-
 նակները իրենց վրէժինդրութինին ընե-
 լու , որ ուսկից կանցնին որսորդները ,
 ան ճամփուն վրայի եղած խռտերը ար-
 մատեն դուրս կըհանեն , որ ուրիշ փի-
 ղերը ան նշանով ճանչնան թշնամւոյն
 ճամփան :

Բայց որչափ վրէժինդիր է , անչափալ
 երախտագետ է , իրեն բարիք ընօղը կը-
 ճանչնայ . բունդիշերի ըսված ֆրանսկնե-
 րու քաղաք մը կայ հինտիստան . հոն
 մէկ զինունոր մը շատ հեղ շեքերի ըրա-
 խի կուտար փղի մը . աս զինունորս օր մը
 գինովցաւ , ուրիշ զինունորները ետևէ
 ընկան ասիկայ բռնելու . ասալ Ճար չու-
 նենալէն փախաւ իր փղին տակը փռվե-
 ցաւ պառկեցաւ . հասան պահապան զին
 ունորները կուզեին բռնել , բայց փիղը
 ար-

արձակ ըյլալով՝ իր խօրթումնվը անսանկ
 գեմ կեցաւ անոնց՝ որ չեկոցան տակէն
 առնել : Ա աղվան օրը զինունորը քնին
 արթնցաւ, տեսաւ զինքը փղին ոտվու-
 ներուն մէջը վախցաւ. փիղն որ իմացաւ
 անոր վախնալը, շոյել սկսաւ անի խօր-
 թումնվ. ու շարժմունքներով հասկը-
